ները կազմուած են պարանահիւսի, հիւսկէններէ, ութաձեւի և արմաւենիկի մոտիւններէ։

Լուսանցքազարդը երկար և զարդարուն բունի վերայ հաստատուած ոսկեզօծ խաչէ։

Դուկասը՝ 174բ. (պատկ. 7) նոյնպէս նստած է աթոռակի վերայ, մանրանկարի մեծութիւնն է 22.5×14, 8 սմ., ոտքերն ու կողերը զարդարուն, թիկունքն ուղիղ անկիւն և հասնում է մինչև աւետարանչի մէջքը։ Աթոռի վերայ ձգուած է սրածայր վերջաւորութիւններով մուրթաթ, ծայրերը զարդարուն։ Աւետարանիչը նըստած է գլուխը դէպի աջ թեքած, երեք քառորդական պրոֆիլով։ Տոգան գորշ կանաչագոյն է, որ իրանի մէջքից ցած մասերն ու ծնկները ծածկում եւ հասնում է, գրեթէ, մինչեւ ոտները, կողքից միայն՝ ներքեւում քիչ բաց, որտեղից երեւում են տունիկայի փէշերը. ազատ է աջ ուսն ու թեւը, եւ երեւում է լայնաթեւ տունիկան. ոտքերին սանդալ ունի։ Ծնկների վերայ դրուած է բաց աւետարան, որի կազմի կապիչներն ու կոճակները երեւում են աջ և ձախ կողմից։ Աւետարանչի ձախ ձեռքը չի երեւում, բայց այն տպաւորութիւնն է ստացւում, թէ բռնած է աւետարանը տակից, իսկ աջով գրիչն է բռնել և գրում է «Քանզի բազ.» աւետարանի սկսուածքը։ Մորուքը գանգուր է, բեխերը դէպի ցած թեքուած, աչքերն ու յոնքերը, քիթը, ամբողջ դէմքն ու գլուխը համաչափ եւ կանոնաւոր. այտերը թեթև կարմիր. գլխի մազերը կարճ կտրուած, բայց ճակատին երկու թեթև փունջ իջած։ Մանրանկարի ֆոնը կապոյտ է, շրջանակը արմաւենիկի ոլորապտոյտ մոտիւներ, կարմիր չերտերի մէջ առնուած։

Սկզբնազարդը (175 ա) ցանցաձեւ, թեք քառանկիւնների մէջ բուսական զարդարանքով խաչաձեւեր են ոսկի ֆոնի վերայ. ցանցագծերը կարմիր, իսկ խաչաձեւերը մոյգ կանաչ և կապոյտ։ «Ի» կազմուած է բուսական զարդարանքներից և գծական հիւսուածքներից. միւս տառերն ամբողջ տողով մանրանկարչական, ութաձեւերի, օղակների և արմաւենիկի զարդերով. ազը թեւաւոր է եւ կապոյտ, դէմքի և մարմնի բնորոշող գծերը թեթև կարմիր։ Որպէս լուսանցքի զարդ կինեվարիւմով դրուած է և տառերի միջին մասերը արմաւենիկի տերեւներով զարդարուած՝ «Սահակայ է գիրքս ի վրկութի.»։

Վերջին մեծ մանրանկարը Յովհաննէս աւետարանիչն է Պրոխորոսի հետ (268ա), (պատկ. 8) 20,3×14,4 սմ. մեծութեամբ։ Աւետարանիչը կանգնած է և երեսը երեք քառորդով դէպի ձախ դարձրած. լսում է Աստուծոյ թելադրութիւնը աջ անկիւնից, ձեւացրած աստղապարդ երկնքից, յուն–հայկական ձեւով օրհնող աջով։ Աւետարանիչը հագել է կապոյտ, սպիտակով ծալքերը չերտաւորած, տունիկայ եւ վերան ձգել մինչեւ ոտները հասնող կանաչ՝ նարնջագոյնով ծալքաւորած տոգան. ոտքերը բոբիկ են։ Ա.Ջ ձեռքով խաչակնքում է Պրոխորոսին որպէս թելադրութեան նըշան, իսկ ձախը փիչ բարձրացրել, զարմացած ուշադրութեան համապատասխան մի չարժում. նիմբուսը բոլորակ է, սպիտակ դաշտը ոճաւորած արմաւենիկով ծածկած։ Մորուքն ու մազերը գորշ են, այտերը թեթև կարմիր, ճակատը դուրս ընկած և լայն։

Պրոխորոսը նստած է ցած եւ անթիկունք աթոռակի վերայ, կարմիր տոգայով և մինչև ոտները հասնող դեղնաւուն տունիկայով, ձախով կազմած աւետարանն է բռնել խուցուրի գրերով, իսկ աջով գրում է եղեգնեայ գրիչ բռնած. (աւետարանների զանազան լեզուներով սկըսուածքը նորա տիեզերական բնոյթն է մատնանշում այստեղ եւ ոչ մանրանկարների սկզբնականների ծագումը)։ Պրոխորոսն անմորուք պատանի է, գլխի սև մազերով, և աչքերն ուղղած դէպի աւետարանիչը։ Մանրանկարի ընդհանուր ֆոնը կապոյտ է, բայց իբրև կենդանացնող տեսարան և զարդ Պրոխորոսի յետեւից նկարուած է (հայկական) մի բոլորակ տաճար, որի մարմինն ու լուսամուտներն առնուած են կեղծ սիւների վերայ հանգչող կամարների տակ, անտրվոյլտները զարդարուն, որոնք նեղ և երկար լուսամուտների և իրենց պսակների հետ ԺԱ. դարում երեան եկած և ԺԴ. ում ընդհանրացած ձեւերն են յիշեցնում։ Տաճարի մարմնի և գմբէթի մէջ եղած տարածութիւնը բոլորակ երիզ է՝ ծածկուած ոճաւորած արմաւենիկներով։ Կեղծ կամարների տակ են առնուած նաև թմբուկի